# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

*0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380389*
*Էլ. փոստ՝ press@moj.am*

**Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
ոստիկանության պետ
պարոն Վ.Գասպարյանին**

**Ի պատասխան Ձեր 2013 թվական ի մայիսի 21-ի
24/871 թվակիր նամակի**

**Հարգելի պարոն Գասպարյան**

Կից ներկայացնում ենք «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 2302-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 2071-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 895 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

1384
14 06 13

**Հարգանքով՝** **Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա.Գևորգյան, հեռ. 380-227

3699
13 06 13

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 2302-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**

1. Նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Նախագիծը համապատասխանում է հավասար և ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական այլ ակտերի դրույթներին:

3. Նախագծում իրավական այլ ակտերի նորմերի անհարկի կրկնություններ առկա չեն:

4. Իրավական ակտում համապատասխան փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունն առկա է:

5. Նախագծում անհրաժեշտ բոլոր հարցերը կարգավորված են:

6. Նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

7. Օրենսդրական տեխնիկայի կանոնները պահպանված են:

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 2071-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**

1. Նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Նախագիծը համապատասխանում է հավասար և ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական այլ ակտերի դրույթներին:

3. Նախագծում իրավական այլ ակտերի նորմերի անհարկի կրկնություններ առկա

չեն:

4. Իրավական ակտում համապատասխան փոփոխություն կատարելու անհրաժեշտությունն առկա է:

5. Նախագծում անհրաժեշտ բոլոր հարցերը կարգավորված են:

6. Նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

7. Օրենսդրական տեխնիկայի կանոնները պահպանված են:

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 895 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**

1. Նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Նախագիծը համապատասխանում է հավասար և ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական այլ ակտերի դրույթներին:

3. Նախագծում իրավական այլ ակտերի նորմերի անհարկի կրկնություններ առկա չեն:

4. Իրավական ակտում համապատասխան փոփոխություն և լրացում կատարելու անհրաժեշտությունն առկա է:

5. Նախագծում անհրաժեշտ բոլոր հարցերը կարգավորված են:

6. Նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

7. Օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն: Այսպես՝

1/ նախագծի վերնագրում «895» թվից հետո անհրաժեշտ է հանել «-Ն» տառը:

2/ նախագծի 1-ին կետի 1-ին ենթակետում «ենթակետում «աղյուսակի» բառից հետո շարադրել նոր խմբագրությամբ «1-ին բաժնի 5-րդ և 11-րդ կետերով.» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ենթակետից անհրաժեշտ է հանել «և 6-րդ բաժնի 6-րդ կետով» բառերը» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջները:

8. Նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցել սույն եզրակացության 7-րդ կետին:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝** **Կ. ԽՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

СЕКРЕТАРЬ СОВЕТА НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
SECRETARY OF THE NATIONAL SECURITY COUNCIL OF REPUBLIC OF ARMENIA

N ԱԽ-1/356
"02" 05 2013 թ.

ՀՀ ոստիկանության պետ
պարոն Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Ի պատասխան Ձեր 22.04.2013թ. N 24/675 գրության՝ հայտնվում է, որ <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 2071-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>>, <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2302-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> և <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 895-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերն ուսումնասիրվել են Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմում:

Որոշումների նախագծերի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չունենք:

1028
03 05 13

Հարգանքով՝

Ա.Բաղդասարյան

ք.Երևան Մ. Բաղրամյան պ.24, հեռ.՝(+374 10) 590 222 ֆաքս՝ (+374 10) 590 210
Республика Армения г. Ереван, пр. М. Баграмяна, 24 тел.: (+374 10) 590 222, факс: (+374 10) 590 210
24 M. Baghramyan ave.,Yerevan, Armenia, tel: (+37410 590 222, fax: (+374 10) 590 210

CENTRAL BANK
OF THE REPUBLIC OF ARMENIA
**CHAIRMAN**

ЦЕНТРАЛЬНЫЙ БАНК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
**ПРЕДСЕДАТЕЛЬ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
**ՆԱԽԱԳԱՀ**

6, Vazgen Sargsyan str., 0010, Yerevan
Tel.:(37410) 583 841
Fax:(37410) 565 496

0010, Երևան, Վազգեն Սարգսյան, 6
Հեռ.՝ (37410) 583 841
Ֆաքս՝ (37410) 565 496

0010,Ереван, Вазгена Саркисяна,6
Тел.: (37410) 583 841
Факс: (37410) 565 496

[illegible] N [illegible]

[illegible] Ձեր N [illegible]

ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ պարոն Վլադիմիր Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան

Հայտնում ենք Ձեզ, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 2071-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 2302-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 895-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների փաթեթի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն առաջարկություններ չունի:

Հարգանքով՝

Արթուր Ջավադյան

1040
06 05 13

կատ.՝ Լ.Գևորգյան
հեռ. 592955

2768

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 56-61-85. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ 01/14.1/2166-13
«29» 04 2013թ

Ձեր № 24/675 2013-04-22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ ՎԼԱԴԻՄԻՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գասպարյան,

Հայտնում ենք, որ «ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 2071-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին», «ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 2302-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» և «ՀՀ կառավարության 2001թ. սեպտեմբերի 24-ի թիվ 895-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերի փաթեթի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չունենք:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ԴԱՎԹՅԱՆ

/ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ/

991
29 04 13

Կատարող՝ Լիլիթ Ճագոյան
+374 597164

2611
29 04

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
## ՏՆՕՐԵՆ

Երևան-1, Նալբանդյան փ. 104

«30» 04 2013 թ. № 11/311

Օր. /..

ՀՀ կառավարության առընթեր
ՀՀ ոստիկանության պետ,
ոստիկանության գեներալ-լեյտենանտ
Վ. ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Ձեր 22.04.2013թ. N 24/675 գրության

Հարգելի պարոն Գասպարյան

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 895-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>>, <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2302-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> և <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 2071-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշումների նախագծերի վերաբերյալ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը դիտողություններ և առաջարկություններ չունի:

Հարգանքով՝
գեներալ-գնդապետ Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

1018
03 05 13

0688

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

«07» 05 2013

№ 1/24.2/3678-13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ
ՊԱՐՈՆ Վ. ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գասպարյան

Ի պատասխան Ձեր 2013 թվականի ապրիլի 22-ի թիվ 24/675 գրության՝ <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 2071-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>>, <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 2302-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>>, <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 895-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշումների նախագծերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունն առաջարկություններ չունի:

Հարգանքով՝

ՆԱԽԱՐԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ԵՐԻՑՅԱՆ

1098
13 05 13

Կատարող՝ հավատարմագրման և լիցենզավորման գործակալություն
Հեռ. 010317797,010317847

Հասցե՝ ՀՀ,ք Երևան, 0054, Դավիթաշեն 4, Ա.Միկոյա ն փող. 109/8
Հեռ.՝ (+ 37410)362015,ֆաքս՝(+37410)363449
Էլ.փոստ՝ mes@mes.am, կայք՝ www.mes.am

2806
08.05

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 53 04
Ֆաքս (+374 10) 52 42 82
Էլ. փոստ: minfin@minfin.am
Վեբ կայք: www.minfin.am

14.05.13 № 1/12.4Ա/6498-13

Ձեր № ______________________

**Հայաստանի Հանրապետության**
**ոստիկանության պետ գեներալ-լեյտենանտ՝**
**պարոն Վլադիմիր Գասպարյանին**

Հարգելի պարոն Գասպարյան

Ուսումնասիրելով Ձեր կողմից 22.04.2013թ. թիվ 24/675 գրությամբ ներկայացված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 895 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 2071-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2302-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերը՝ հայտնում ենք հետևյալը.

1) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 895 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին կետի 1) ենթակետով նախատեսվում է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 43-րդ հոդվածի 2-րդ մասով հաստատված աղյուսակի (այսուհետ՝ Աղյուսակ) 1-ին բաժնի 4-րդ կետում նշված «Զենքի արտադրություն» գործունեության տեսակը լիցենզավորող՝ ՀՀ կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմին սահմանել ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանությանը: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ Աղյուսակի 1-ին բաժնի 4-րդ

1133
15 05 13

կետի 3-րդ սյունակում լիցենզավորող մարմինը նշված է «ՀՀԿ», իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն «ՀՀԿ» հապավումը վերծանվում է «Հայաստանի Հանրապետության կառավարություն»: Փաստորեն, «Զենքի արտադրություն» գործունեության տեսակի լիցենզավորող մարմինը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսինքն՝ այդ գործունեության տեսակի լիցենզավորումը ՀՀ կառավարության 24.09.2001թ. թիվ 895 որոշմամբ որևէ պետական մարմնի լիազորված չէ և չէր կարող լիազորվել, քանի որ նշված գործունեության տեսակի լիցենզավորումը Օրենքով վերապահված է ՀՀ կառավարությանը):

2) Սույն գրության 1-ին կետում նշված առաջարկությունը վերաբերում է նաև Նախագծի 1-ին կետի 3) և 4) ենթակետերին, քանի որ Աղյուսակի 1-ին բաժնի 1-ին կետում նշված «Պայթուցիկ նյութերի և պայթեցման սարքավորումների արտադրություն» գործունեության տեսակը լիցենզավորող մարմինը ևս Օրենքով հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3) Նախագծի 1-ին կետի 1) և 3) ենթակետերով նախատեսվող փոփոխություններով հղում է կատարվում Աղյուսակի 1-ին բաժնի 4-րդ կետում նշված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակին, սակայն Նախագծի 1-ին կետի 1) ենթակետում նշելով «քաղաքացիական և ծառայողական զենքի արտադրություն», իսկ Նախագծի 1-ին կետի 3) ենթակետում՝ «մարտական զենքի արտադրություն»: Այս փոփոխությունը համարում ենք անընդունելի, քանի որ բացի սույն գրության 1-ին և 2-րդ կետերով նշված դիտողությունների, Աղյուսակի 1-ին բաժնի 4-րդ կետում նշված գործունեության տեսակի անվանումն Օրենքով սահմանված է «Զենքի արտադրություն», ուստի նշված գործունեության տեսակը ՀՀ կառավարության որոշմամբ չի կարող տարանջատվել և փոխարեն այլ անվանումներ չեն կարող սահմանվել:

4) Միաժամանակ հայտնում ենք, որ Նախագծին կից ներկայացված՝ իրավական ակտի ընդունման առնչությամբ այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության կամ բացակայության մասին տեղեկանքում նշված է, որ այդ իրավական ակտի ընդունման կապակցությամբ անհրաժեշտություն կառաջանա համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 2071-Ն և ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2302-Ն որոշումների մեջ, իսկ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2302-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծին կից ներկայացված տեղեկանքում նշված է, որ այդ իրավական ակտի ընդունման կապակցությամբ անհրաժեշտություն կառաջանա համապատասխան փոփոխություն կատարել ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 895 որոշման մեջ: Սակայն հաշվի առնելով, որ վերը նշված՝ ՀՀ կառավարության որոշումների նախագծերով նախատեսվում է Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով հաստատված աղյուսակի 6-րդ բաժնի 6-րդ կետում նշված ինկասացիոն ծառայությունների մատուցման լիցենզավորման ոլորտի լիազոր մարմնի իրավասությունները վերապահել ՀՀ ֆինանսների նախարարությանը, ուստի անհրաժեշտ է՝ համապատասխան փոփոխություններ կատարվեն նաև ՀՀ կառավարության 2010 թվականի օգոստոսի 19-ի N 1146-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության կանոնադրության մեջ:

**Հարգանքով՝** **Դավիթ Սարգսյան**

Ֆինանսական շուկայի զարգացման վարչություն
Հեռ.՝59-51-24 Ն. Մուրադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

«3» 05 2013թ.
Դ2/510-730

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ Վ.ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Հարգելի Վլադիմիր Սերգեյի

2013 թվականի ապրիլի 22-ի Ձեր N 24/675 գրության առնչությամբ հայտնում եմ, որ <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 895-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծում առաջարկում ենք 1-ին կետի 1-ին ենթակետում <<1-ին մասի 4-րդ (քաղաքացիական և ծառայողական զենքի արտադրություն)>> բառերը և 3-րդ ենթակետը հանել, քանի որ <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին բաժնի 4-րդ կետի համար լիցենզավորող մարմին է հանդիսանում ՀՀ կառավարությունը, իսկ ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 2048-Ն որոշման <<1[1]>> կետով լիազորված մարմնի իրավասությունները վերապահված են՝ քաղաքացիական և ծառայողական զենքի արտադրության լիցենզիայի համար՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությանը, իսկ մարտական զենքի արտադրության լիցենզիայի համար՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը:

Հայտնում եմ նաև, որ <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 2302-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունենք:

1042
06 05 13

Հարգանքով՝

Ս.ՕՀԱՆՅԱՆ

2270
06 05 13

ք.Երևան, 0044, Բագրևանդի 5, Հեռ.(+374 10) 29-44-01, Ֆաքս (+374 10) 29-43-12